


ԲՍԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Ֆրք 10
Վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲՍԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան Ֆրանք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ


ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի Շաբաթ օրերը: Ծա-
նոցման տողը 10 Մանդիմ: Երու թիւ ա-
ռաջ հրատարակուած թերթը 40 Մանդիմ:
Զհրատարակուած գրութիւնը եւ յտրոյր:

Հասցէ
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNNA



Դաշտին
աղւոր ծաղիկը:



Քաղբին
բարի—ծաղիկը:

ԱԶԳԱՅԻՆ

Գոհութեամբ իմացանք որ տեղւոյս նախ-
կին հիւանդանոցին մէջ, ուր տակաւին բաւա-
կան թուով չքաւոր հայ գաղթականներ կը
բնակին, երէկ Քաղաքապետութեան կողմէ
պէտք եղածին չափ վառարաններ ղրուելը է
և փայտն ալ մէկ բանի օրէն պիտի բերուի
եզեր:

Նոյնպէս լսեցինք որ տեղւոյս Աղբա-
տանումը, չքաւոր գաղթականաց գոնէ մի-
միայն փայտ հայթայթելու համար որոշել է
հանգանակութեան մը ձեռնարկել. եթէ այս
լուրը ստոյգ է, ա'լ վերջ պիտի տրուի խուժը
խուժը թշուառաց հայ վաճառատուններու
և խանութներու առջև շարուելուն, որոնք
կուլան կողբան ու մարդոց գործերուն արգելք
կըլլան: «Ո՞ր մէկուն օգնենք», կըսեն մարդիկը
եւ իրաւունք ալ ունին. կըսեն նաեւ թէ ա-
սոր առաջըր առնելու համար Աղբատ. ըն-
կերութիւնը պարտաւոր է գօտեպնդիլ ու
հանգանակութեան մը ձեռնարկել գէթ փայտի
համար, ապահով ըլլալով որ արգիւնաբեր
պիտի ըլլայ իր այս ձեռնարկ. վասնզի իրենք
պատրաստ են միանգամ ընդ միշտ գումար
մը տալ՝ քան տմեն օր այդ չքաւորաց կա-
րավաններուն՝ վաճառատուններու առջև շա-
րուելը տեսնել ու ճշգրտութիւն լսել:

Քաղաքիս հիւանդանոցին մէջ, ուր աղբատ
գաղթականք կը բնակէին, 2 անտէր սնտուկներ
կան, որոնց մէկուն մէջէն Նշիա Գարագաշեան
անունով կնիք մը գտնուած է. կը խնդրուի
յիշեալ անձին ո՞ր գտնուիլը իմացնել խմբագ-
րութեանս:

21 ՎԵՐՑՈՒՆԷ

ԱՀԸ ՍՐՏԷՆ, ԱՄՕԹՆ ԵՐԵՍԷՆ

Վերջապէս, գաղթական կորգ մը վերջին աստիճանի անկիրթ ու շլտի կիներ, անցեալ տարի Օրիորդ ֆրայդէրի ըրածնին այս շաբթու Պ. Ա. Ամիրխանեանցին ալ ընելով, այսինքն դուռը քարկոծել ու պատուհանին ապակին կտրել յանդգնելուն համար, Պատուելին ալ ահամայ ստիպուել է փողոցի դրանը վրայ թուղթ մը փակցնել, յայտարարող որ, այսուհետեւ ոչ հաց, ոչ փայտ, ոչ հագուստ և ոչ դրամ չպիտի կրնայ նըպաստել:

Հնորհիւ այդ կարգ մը շլտիներու, որոնց շատերուն ամուսինները մէյմէկ գործի աէր են եղեր, բայց «Աւելորդ ապրանքը աչք չի հաներ», ըսելով, մինչեւ այս աստիճան ծայրահեղութեան դիմել են, այդ շլտիներուն շնորհիւ կրննք, ճշմարիտ չըբաւորներն ալ պիտի զրկուին այն նպաստէն, զոր Պատուելին կրնէր անոնց:

Պատուելին յանցանքը սա է ելեր որ, մանրագնին քննութենէ մը ետքը կը նպաստէ, օրիորդ ֆրայդէրի պէս քննիչներ կարգած չէ որ խաթեր համար գործ կը տեսնան ըսուի: Իր այս կերպ վարմունքին համար է որ կարգ մը անօթի զէվզէքներ ասդին անդին կը քըննադատեն զինքը: Ասոնք մեծաւ մասամբ սիրահարներ են գաղթական կարգ մը գեղանի կիներու և աղջիկներու, որոնց աչքին հաճոյ երեւնալու համար կը ճգնին Պատուելիէն նպաստ մը կապել տալ, ու չի յաջողելուն պատճառաւ կռուարար կնիկները ոտքի կը հանեն:

Կեցցէ՛ն:

Նամակ առ Խմբագրութիւն

Վառնա 6 Նոյ

... Խմբագիր Տէր.

Քաղաքիս Ս. Եկեղեցւոյ կանանց վերնատունն ամեն անգամ որ կը մաքրեմ, փո-

չիէն աւելի չը տեսնեմ Քրմսրգի, ամերիկյան Քրսսրգի կեղեւներ. յայտնի է որ ասոնք հոն կերուած ու կեղեւները ձգուած են. նոյնպէս հացի եւ փոկեղի կտորուանքներ ասդին անդին տարածուած, զորս մայրեր իրենց զաւակաց ձայնը հանել չի տալու համար ձեռուրնին տուած են:

Ի՞նչ է այս. Աստուծոյ տունը ճաշարան է թէ զբօսարան: Անգամ մը չէ որ այսպէս կընեն, այլ՝ միշտ: Ո՛ր տեսնուած է ասանկ բան:

Աւելածու

Գ. Մ.

Տակաւին ինչե՛ր պիտի լսենք:

Այն մայրերը, որ զաւակներուն ձայնը կտրելու համար այս ընթացքը կը բռնեն, պարտաւ տեղը եկեղեցի գացած կըլլան, վասնորի կալինն ու ամերիկյան Ֆատրիսին կտրել ըստկել ու տղոցը տալէ գլուխ չպիտի առնեն որ աղօթելու ալ ժամանակ ունենան:

Եկեղեցական օրինաց հակառակ այս անտեղութեան առաջը առնելու համար արդեօք վերնատունը ժամկոչուհի՞ մը դնելու է...:

Անտորագիր նամակ մը եկած է մեզ, սպառնալով որ անգամ մ'ալ գաւաթով կամ թաշկինակով 'ի նպաստ աղքատի է ըսելով դրամ ժողովող գողերուն դէմ բան չի գըրենք:

Զարմանալի չէ այս աստիճան անամօթութիւն, քանի որ գողերու կողմէ կըլլայ:

Զայս իմացնելով մեր Արդոյ ընթերցողաց, միանգամ ընդ միշտ կըզգուշացնենք զիրենք այդ աւազակներէն չի խաբուիլ:

ԹԱՇԿԻՆԱԿԻ ԳԻԻՏԸ

Հիմա որ ձմեռ է և հարբուխներու եղանակը, յարմար ժամանակ է ուրեմն գըրպանի թաշկինակներու վրայ խօսելու:

Առաջին թաշկինակը Եւրոպա մտցու-

ցաւ ասկէ չուրջ 350 տարի առաջ: Դէպ ի քաղաքակրթութիւն այս կարեւոր քայլն առնողը եղած է գեղեցիկ վեհեակուհի մը: Հետեաբար Խտալիան է գրպանի թաշկինակներուն օրրանը. բայց քիչ յետոյ Ալպեան լեռներն անցնելով մտան Գրանսա, ուր Հանրի Բ. ի արքունի պալատականաց կողմէ ընդունուելով գործածուիլ սկսան:

Այն ժամանակի թաշկինակները թանկագին կերպաներէ կը շինուէին, ասեղնագործութիւններով կը զարդարուէին ու պերճանքի առարկայ մ'էին: Հանրի Գ. ի օրով ըսկան հոտաւետել զայնս:

1580ին թաշկինակը մուտ գտաւ 'ի Գերմանիա, ուր իշխաններ և մեծահարուստ մարդիկ միայն կը գործածէին: Իբրեւ նուէր ևս կուտային հռչակաւոր խօսեցեալներու:

Թաշկինակին գործածութեան համար տուրքեր սահմանուեցան 'ի Գերմանիա, եւ Տրեզորարի մէջ 1595ին հրատարակուած հրովարտակ մը բացարձակապէս արգիլեց ժողովրդեան անոր գործածութիւնը: Բայց բարեբախտաբար այն օրէն 'ի վեր խիստ ժողովրդականացած է:

Թարգմ.



ՀԱՅԵԼԻԻ ԹՂԹԱՏԱՐԸ

Առ Ս. Ա. Վ. իտին. — Շնորհակալութեամբ ստացանք:

Գ. Տ. Ֆիլիպէ. — Զքոյս 'ի քոյոց քեզ մատուցանենք, այսինքն զրկած այն 10 ֆրանքնիդ, որուն փոխարէն կը պահանջէիք մէկուն հետ ունեցած լոկ անձնական հաշիւնիդ կարգադմել: Այդ տեսակ խնդիրներու համար մեր էջերը փակ են: Դրամը յանձնեցինք այն անձին որ մեզի բերած էր:

Առ. Պ. Տ. Բ. — 2ի վայրեր: Պատկեր արարողութիւնը կատարուած պահուն՝ դուն ալ Տէրտէրին խալախը գլուխդ դրեր ու դիմացի սենեակին մէջ սկսեր ես միմոսու-թիւններ ընել մէկ քանի օրիորդներու հաճոյք պատճառելու համար: Ամօթ է:

Առ Ե. Մ. Բաղարճըգ — Մինչեւ երբ պիտի անդէք: Մեր ընթերցողները ձեր առուտուրի կռիւները մտիկ ընելու համար չեն վճարեր կոր մեզի: Հայելիի էջերը առեւտրական դատարանի սրահներ չեն:

Առ Գ. Վ. — Անկարելի է. դրամը վճարեցէք որ զրկենք: Կանխիկ է:

Առ. Պ. Պ. — Ոսկերչութեան մէջ առանց իսանուրի գործ չի տեսնալ վարժուելն ուղ. համար է անշուշտ որ հարիւրին 30 զեղչով կ'ուզէք բաժանորդ ըլլալ Հայելիին: Պէտէսթէնին դուռը չենք: Հայելին մեր քովը գրամիդ ալ ձեր քովը թող մնան:


Առ Պ. Մ. Մ. — Մինչեւ երբ ձրի կարդալու համար անկէ ասկէ թերթ պիտի մուրաս:

Տեար Գալէմճեանի նախաձեռնութեամբ թատերական խումբ մը կազմուելու վրայ է, այս ձմեռ Վառնայի մէջ մէկ քանի ընտիր ներկայացումներ տրուելու համար:



ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ

Օրմանեան Պատրիարքին եւ կեդրոնական վարչութեան կողմէ մատուցուած այն թագրիրը, որ ի մէջ այլոց Պուլկարիաէն Պուլիս վերադարձող գաղթականաց դէմ եղած հալածանքին վերջ տրուելը կը խնդրէր, ըստ օրինի միմեկի ալքը եղեր է:



ՊԱՐԱՍԷՐ

(ՎԻՊԱԿ)

Օննիկ աղան առոյգ և զուարճասէր անձ մըն էր։ Բաւական գեղադեմ էր և միայն կանացի անտարբեր աչերու չէ որ կը հանգիպէր աշխարհի մէջ։

Այս պատճառով անոնց հաճելի թուիլը սրբազան պարտք կը համարէր։ Խնամուած արդուզարդեր կը կրեր և իր տունը, կոկիկ և ճաշակաւոր, յաճախ իր դռները կը բանար պարասէր տիկիններուն։

Հատ կը սիրէր պարը Օննիկ աղան։ Ինչպէս թատրոնը՝ պորսան, նոյնպէս ալ ըզգլխիչ վալս մը՝ սիրոյ արտաքին գործոց նախարարը կը համարէր. և, չարախօս բերանները կը պնդէին թէ՝ այս ճշմարտութիւնը հաստատելու քանքերուն մէջ չէր թերանար։

Հարկ է աւելցնել թէ Օննիկ աղային մկրտութեան անունը շատ երկար միջոցներ չէր թողուր իր տուած երեկոյթներուն մէջ. ընդհակառակը շատ դիւրութիւններ կ'ուտար իրեն։ Յովհաննէս Մկրտիչին կեանքի ամենէն աննշան պարագաները մեծահանգէս և մեծածախ կը տօնէր։ Բայց եթէ դրամը կը չուէր, 'ի փոխաբէն՝ գեղեցիկ սեռին աղու ժպիտները կուգային լեցնել իր ամուրիի հրատաճող սիրտը։

Եւ եկաւ օր մը, օր միայն եւ տխուր, ուր Օննիկ աղային արկղերը նուազ շողջողուն դարձան։ Իր արդուզարդը նուազ լիայլուն, մազերը նուազ խնամոտ եղան, և վերջապէս ամբողջ էութիւնը նսեմութեան ամպի մը մէջ սկսան սուղիլ. և, ո՛վ դժբախտութիւն, ժըպիտներն ալ, այդ ամպերու ետին, ճշմարիտ

աստղերու պէս տակաւ սկսան անհետանալ։

Իր երեկոյթները հասցուցած էին զինքը այդ խեղճ վիճակին։ Երեկոյթներուն պատճառը իր անունն էր, և անուան ալ պատճառը համանուն սուրբը։

Օր մը, Օննիկ աղան, փիլիսոփայական խոր մտածմանց մէջ սաւառնելէ ետքը, յանկարծ ներշնչուած մը զինքը դրդեց եկեղեցի երթալ, Յովհաննէս Մկրտիչին ներկայանալ և իր աղբեցիկ անուանակցին պաշտպանութիւնը խնդրել։

Լուսարարի մը հանգիպեցաւ։

— Ահա ըսաւ, լուսարարը սկիզբ է։

Աւա՛ղ ամեն յոյս կորած էր։ Իրմէ շատ աւելի չքաւոր կ'երեւէր այն՝ որու վրայ կեդրոնացուցած էր իր յոյսերը. հազիւ թէ ամենէն անհրաժեշտ զգեստի ծուէնը կը ծածկէր անոր լերկ մարմինը։

Օննիկ աղան գլուխը տխրութեամբ շարժեց։

— Ափսո՛ս, ըսաւ, ինձմէ առաջ փճացուցեր ես ունեցածդ չ'ունեցածդ, անշուշտ ինծի պէս անուանդ բաղմամբիւ տարեդարձներուդ առթիւ երեկոյթներ տալով բարեկամներու։

ՕՍԻՐԷ

Երկու Բարեկամուհիք

— Սուրբիկ հանըմ՝, գիտե՞ս աղւոր տուն մը բռնեցի։

— Բարով նստիս.

— Հնորհակալ եմ՝. հէլէ սօնը սօնը մուրտիս հասայ. սոխախին դուռը անտարմեծ է թի՛ փաշախաբուսին հիչ է անոր քովը։

— Ատ խրտար մենձ դուռը ի՞նչ ֆայտա կընէ քի...

— Ուխտ եմ ըրեր, աղաս կամգեմ նէ հարսըս փայթոնով դուռնէն ներս խոթեմ պիտի։

— Վույ խելքդ սիրեմ. ետքն ալ հարսդ քեզի չէօփ առապասիով դուրս քչէ պիտի։

Ֆրանսերէնի ուսուցիչ մը իր աշակերտներէն մէկուն կըսէ .

— Ի՞նչ աստիճան բլծամիտ տղայ ես եղեր . ամեն տուն իգական բառերուն արական յօդ կը դնես :

— Ի՞նչ ընեմ , միւսիւ , կը պատասխանէ ուսանողը , ինքզինքը արդարացնելու մտօք . բառերը ոչ պէս ունին և ոչ ալ մօրուք , որ արու կամ էգ ըլլալին հասկնամ :

— o —

Տան մը մէջ .

— Ինծի նայէ Գառնիկ աղա , հիմա կերթա՞ս կոր .

— Հա՛ , կերթամ կոր , նորէն ի՞նչ կայ , բա՞ն մը պէտք է .

— Հէլպէթտէ , սա չի կայ նա չի կայ , հէլէ փատ քէօմիւր՝ տիրէ՛մ չի կայ .

— Կնի՛կ , առտու մըն ալ բան մը չեմ ուզեր ըսես նէ չըլլար :

— Ի՞նչ պօշ լաւըրտըներ կընես , ճանրմ Գառնիկ աղա , ուզածներս քի չես բերեր կոր , հապա չուզեմ նէ հալըս ուր կերթայ :

ԱՆՏԵՐ ՆԱՄԱԿ ՄԸ

Հետեւեալը , որ անցեալ տարուան թուականը կը կրէ , 3 օր առաջ Վառնայի նաւամտոյցին վրայէն գտնուած է : Կ'երևի թէ Կեսարիական ի Պոլիս որու որ զրկուած է՝ նոյն անձը Վառնա գաղթած՝ ու վրայէն ձգած ըլլալու է :

Իբի զօղիւմ օղլում հաժ Օղոբ :

Վաֆիիր սէլամ էտերիմ վէ զօղլերին տէն օբերիմ : Մալիմ օլա պաստրմալարն մէխտիպինի ալմատըն , պաստրմալարը սաթտըն ըսա խարարլարընը քէշէլերինը նիթտին . չաբըն զօնտեր . սօղնատան պիր չըխը տա կէրմիրլի Ղարապիտին տէնդինտէ սանղա զօնտէրտիմ . իչինտէ տէօրթ չիֆթ Եիվլի չօրապ :

Խարւմ օխղա ճամըզ դայմաղը զուրուսու , իբի օխղա տա Եարմաճա . վէ պիրտէ ժամտա դայնանընան պէօյիւք պալտըղըն վէ նշանըն պէնի զօրտիւլէր . նշանըն էլիմի էօբտիւ զաչտըղըզ էքէյի ուզամըշ . աման տիւզիւր անա պիզէ զիտէխ տէտիլէր , զիթմէտիմ . սէնի սօրտուլար . մէխտիպինտէքի սէլամընը տէտիմ . չօխ կուլտիւլէր : Պէնիմ օղլում , էլին զըզընըն պաշընը պաղլատըխ , նէ՞ իտէճէիս . նէ՞ վախթ զէլէճէխսին , Եօխսա ըսթանպըլըն արվատլարը սէնի զանտըրընօրլար . սախըն օղուլ , Խանտա հաճ էնիշտէնին Եանընտան այրըլմա հա՛ : Պէն Եէղէնին հաճ Կօօգա (Գէորգ) պապասընա Եազտըրտըմ . կուզուն զէլմէլիսին քի սէնի տէ էօլմէտէն պիր պաշ կօզ էտէյիմ :

Օղլում , զէլտիդինտէ պէրապէր զէթիրմէլիսին . պաղա պիր չուխա տօլամալըխ , պիր ֆիլտիշի տարախ , պիր չիֆթ ճէվիզ նալի , պիր ըշըլախ զունտուրա , պիր թօք չիթ , պիր թօք ամալէգան :

Տիւղիւնինտէ իլաղըմ պիր պաթմանլըխ պիր զուլթու շէքէր ալ : Պիր տէ , տայըմըզ զէլիսօր տէյի Եղէնլէրին կուլիւօրլար , օնլարա տա պիրէր ըշըլախ զունտուրա զէթիր :

Նէ՞ Եաբըրօրսըն հօճա , չօճուգլարը նիչիւն տէօվէյօրսըն :

— Թէրպիյէ իթմէք իչիւն .

— Թէրպիյէ տաեա՞գլա մը օլուր ,

— Էյլէ Եա՛ , տաեադ ճէննէթտէն

չըգար :

— Ա՛ պուտալա , տաեագ էյի . պիր շէյ օլմուշ օլայտը , ճէննէթտէն տիշարը չըգա՞ր մը իտի :

ԳՈՐԾԱԽՈՐԱՑ ՀԱՄԱՐ

Կ'ուղէ՞ք աժան ճաշ մը ընել , դիմեցէք հօթէլ Տօպրիչ , Գրիգոր Քիւչիւքեանի ճաշարանը , համադամ կերակուրներ պիտի գտնէք գործաւորի քսակին յարմար :

ՍԻՐԱԽՆ ԿԱՅԾԵՐ

Սրտիս հատոր հոգւոյս խորան պաշտելիս .
Ո՛հ ալեկոծ ծով մ'է կարծես իմ հոգիս .
Խիստ հեռու եմ իմ աննման Հորիկէն ,
Հովն ալ չ'ուզէր բերել իւր շէկ մազեէն :

Անգուժ երկինք ինչո՞ւ դրիր սրտիս սէր ,
Մինչ հեռու է սրտագործ հոգւոյս տէր .
Եկ նազելիս տես իմ վիճակ եղկելի ,
Տե՛ս գգուանաց կարօտ սիրտս ցաւօք լի :

Թշուառ կեանքէս հրաժարիլ ես բաձամ ,
Բայց բո սէլը , ո՛հ հոգիս սէրը յարաժամ
Բռնադատէ ապրիլ քեզմով , բեզ համար ,
Սիրակարօտ շրթներս յիշեն զքեզ անդադալ :

Հոս տխրադեմ օտար ափանց մէջ շրջիմ ,
Ո՛հ հոգիս սիրոյդ համար միայն ես կապրիմ .
Ծովու ձուկն եմ եւ դու ջուրն կենսատու ,
Ո՛հ կը մեռնիմ ես ջրէն դուրս . կ'ապրիս դու :

Քեզմէ հեռու աւա՛ղ ես միշտ դժգոհ եմ ,
Գոհ եմ միայն երբ ոսկեթել մազդ շոյեմ .
Մխիթարէ՛քեալ հոգիս , մխիթարէ՛ք սի-
րով .

Ո՛հ անհնար է ինձ դառնալ ու վայելել քո
գորով

Օսա—Բազարուս

Անցած օր կծծի մը Մոնսալլայի Հայ
ճաշարաններէն մէկուն մէջ ճաշելէն ետքը .
աւելցած կէս շերտ (2 ու կէս փարայի) հա-
ցը գրպանը դրած կը մեկնի , հազիւ թէ քա-
նի մը քայլ առած է եղեր , պատուաւոր
վաճառական բարեկամի մը կը հանդիպի
որուն հետ խօսակցելով կը յառաջանան , այն
միջոցին թաշկինակի պէտք ունենալուն , զայն
գրպանէն դուրս հանած ատենը հացին կտորն
ալ փողոցը կիյնայ . դիմացէն եկող կո-
շիկ ներկող տղայ մը հացը կը վերցնէ ու

տէրօջը յանձնելով կրտէ . — Հաճի ազա ,
հացդ ինկաւ :

Դուք երեւակայեցէք կծծիին դէմքին
այլակերպութիւնը :



Երկու Բարեկամք

Իշթէ ձմեռը եկաւ , ի՞նչ պիտի ընեմ
չիյտեմ . սա պատռտած բանթօյօնէս ու կտոր
կտոր եղած բալթօէս զատ վրաս բան մը
չունիմ :

— Պէտք է այդ վիճակէդ ալ գոհ ըլ-
լաս , բարեկամս , վասն զի ծնած ատեննիս հա-
լուստն ալ էսնափն ալ , դուն ալ ես ալ
հիմակուան վիճակնէս աւելի աղքատ էինք :

— Աւելի աղքատ էինք մի՛ .

— Անանկ է եա՛ . որովհետեւ մերկ ծը-
նանք :

Վարժարանի մէջ :

— Պողո՛ս , գասերուդ մէջ միշտ ետ կը
մնաս կոր . տունը եղբայր մը չունի՞ս .

— Ունիմ :

— Ուրեմն աղաչէ անոր որ իրիկուննե-
րը դասդ սովորեցնէ :

— Ան չի սովորեցներ , միւսիւ .

— Ի՞նչու .

— Որովհետեւ տա՛հա ութն ամսու է .

Օրիորդի մը հարցուցին թէ,

« քու պզտիկ եղբայրդ բանի՞ տարե-
կան է . »

Օրիորդը զգալով որ ասանկով իր տա-
րիքը հասկնալ կ'ուզեն , պատասխանեց .

— Երկու տարիէն երկուքս ալ միեւնոյն
տարիքը պիտի ունենանք :

Անմեղ հարցում մը

Երկու աղջկանց հայր աղքատ գիւղա-
ցի մը , ազնուական Պարոնի մը կառքին տակ
մնալով , խեղճին մէկ ոտքը ջախջախուած էր ,
և այս փորձանքին իբրև տուգանք Պարոնէն
ստացած տասը հազար ֆրանքովը ամուսնա-
ցուցած էր իւր մեծ աղջիկը :

Ժամանակ մը վերջը պզտիկ աղջիկը կը
հարցնէ իւր հօրը .

— Հայրիկ , միւս ոտքդ ե՞րբ պիտի կոտ-
րես . . . :

Աֆուղուութի Պետիկ

Այս խելակորոյսը , որ անցածները ա-
մուսնացեր էր վաճառականներէ առած ու
ծախած ապրանքներուն դրամով , ամուսնա-
նայէն բանի մը որ վերջը կինը տանը մէջ ու
իր մայրն ալ փողոցին մէջ կը ծեծէ :

Մայրը անդիէն ասգիէն լսած ըլլալով
որ եթէ տղան կարգէ՝ խիլքը գլուխը պիտի
գայ , (իբր թէ առնիլիք հարսը յիմարանո-
ցապետ մը եղած ըլլար) աս հաւատքով ելեր
տղան կարգեր է , բայց տեսնելով որ հիմա
աւելի թրուցեր է և թերեւս ճիտն ալ փաթ-
տուի , ուստի կոշիկները հագնելով տունէն կը
մեկնի :

Հիմա այս պակասամիտը կը պատրաս-
տուի եղեր յեգիպտոս կ'իկն . բայց պարտա-
պահանջը նաւամատոյցին վրայ գետեր կար-
գած են զայն չի փախցնելու համար :

բ

ԲՈԺ — Պալօնով փախչելէ ուրիշ չունիս
ճարիկ , Պարոն Պէտիկ :

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 28

Կանանչ է երբ ծնի ,

ճերմակ է երբ ծախուի .

Բայց — վամպագոյն կուտուի .

Ասիկայ ի՞նչ կոչուի :

— 0 —

Լուծումն թիւ 27 հանելուկի :

Հանելուկիդ մէն մի տողեր

Ցոյց տան կառքին չորս Անիւներ :

Սօֆի Տամատեան :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈԳՐԻՆ ՏՂԱՅՈՅ

Այս երգարանը , իր տեսակին մէջ առա-
ջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով ,
կը պարունակէ մանկական զուարճալի երգեր
ու քանի մը ոտանաւոր առակներ եւ կրնայ
երախայներուն ծառայել նաեւ իբր ընթեր-
ցանութեան զիրք որուն պարունակութիւնը
զբօսեցուցիչ եւ հրահանգիչ է միանգամայն
անոնց համար :

Թուղթը ընտիր է , տպագրութիւնը՝ մա-
քուր եւ կազմը վայելուչ :

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կեդրոն . Վառնա , Արեւելեան տպարան ,

2րդ . թաղ , թիւ 1104 :